Արձանագրություն N 3

2025-2026 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/8/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» «Դեկտեմբերի» 2024թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 29.10.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 11:00-ին: 2024 թվականի հոկտեմբերի 23-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
2	«Կուրացիո» ՍՊԸ	Curatio.llc@gmail.com	02585487

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Թեոֆրամա Իմպորտ» ԱՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Թեոֆարմա Իմպորտ» ԱՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության

04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 09.12.2024թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակիցներին համապատասխան շտկումներ անելու մասին՝

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/8/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի մասով շտկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի (դեղի) հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի հստակ անվանումը: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Սահմանված ժամկետում «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումը կատարված էր և ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) ճշտված տարբերակը ներբեռնված էր էլեկտրոնային աճուրդ համակարգ և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 22.10.2024թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենաի 29-րդ հոդվածի, սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացվել են պարզաբանումներ:

Հարցում 1, ստացվել է 31.10.2024թ.

«Հարգելի հանձնաժողով համաձայն տեխնիկական բնութագրի 60%-ից բարձր,գրամ սպիտակուցի պարունակությամբ խառնուրդը պետք է նախատեսված լինի 1 տարեկանից բարձր երեխաների համար: Սակայն շատ արտադրողներ և բժշկական ասոցացիաներ նման սպիտակուցի պարունակություն ունեցող ապրանքը խորհուրդ են տալիս կիրառել 7 տարեկանից բարձր երեխաների համար: Մեր արտադրողը նույնպես խորհուրդ է տալիս կիրառել այդ խառնուրդը 7 տարեկանից բարձր երեխաների համար: Վերոգրյալից ելնելով՝ խնդրում ենք տալ ստույգ պատասխան, եթե մենք առաջարկենք այդ չափաբաժնի բոլոր դրույթներին համապատասխան խառնուրդ, որը նախատեսված է 7 տարեկանից բարձր երեխաների համար, Դուք այն կընդունեք, թե կդիտարկեք ինչպես անհամապատասխանություն տեխնիկական բնութագրին:»

Պարզաբանում 1, տրամադրվել է 01.11.2024թ.

«Հարգելի գործընկեր: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:»

Հարցում 2, ստացվել է 02.11.2024թ.

«Հարգելի հանձնաժողով տեխնիկական բնութագրով 60%-ից բարձր,գրամ սպիտակուցի պարունակությամբ խառնուրդը նախատեսված է 1 տարեկանից բարձր երեխաների համար, ինչը փաստացի կիրառելի չէ: Տվյալ սպիտակուցի պարունակությամբ խառնուրդը, եթե նախատեսված է 1 տարեկանից բարձր երեխաների համար, սահմանափակում է գրեթե բոլոր ապրանքների մասնակցությունը և համապատասխանում է միայն երկու արտադրողի: 1 – 6 տարեկան երեխաները ստանալու են տվյալ խառնուրդը, թե ոչ? Թե 1 տարեկանից բարձր պահանջը կրում է ստանդարտ բնույթ?»

Պարզաբանում 2, տրամադրվել է 04.11.2024թ.

«Հարգելի գործընկեր Բացի նորածինների համար նախատեսված խառնուրդների, մնացած բոլոր տեսակի խառնուրդները կիրառվում են 1 տարեկանից բարձր պացիենտների համար: Երեխաներից շատերը ունենում են խառնուրդներից հրաժարվելու ժամանակահատվածներ, այդ ընթացքում խառնուրդը փոխարինվում է սպիտակուցի այլ տոկոսային պարունակության խառնուրդով, կամ համադրվում է մի քանի խառնուրդներ: Այդ պատճառով 1 տարեկանից պահանջը չի կրում ֆորմալ բնույթ, այլ բխում է պացիենտների նախասիրությունների առանձնահատկությամբ:»

Հարցում 3, ստացվել է 07.11.2024թ.

«Հարգելի հանձնաժողով, եթե արտադրողը ներկայացնում է պաշտոնական գրություն / հավաստում, որ խառնուրդը բժշկի ցուցումով կարելի է օգտագործել ավելի վաղ տարիքի երեխաների համար, քան այդ ապրանքի վրա նշված է, արդյոք դա համարվում է բավարար հայտը տեխնիկական բնութագրին անհամապատասխան չճանաչելու և չմերժելու համար:»

Պարզաբանում 3, տրամադրվել է 11.11.2024թ.

«Հարգելի գործընկեր: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը: Այնուհանդերձ հարկ ենք համարում նշել, որ Ձեր կողմից առաջարկվող և հետագայում հաղթելու դեպքում մատակարարվելիք ապրանքը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին՝ այդ թվում տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/8/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/8/2» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն, 93,600,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Կուրացիո» ՍՊԸ-ի հայտը:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/8/2» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.12.2024թ.-ից մինչև 21.12.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Ս. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մարգսյան

2025 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղի Հեպատիտ C վերաբերյալ
վերջնական գներով 18.11.24թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ					«Կուրացիո» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ֆելիլ ալանին չպարունակող մանկական կեր 1-14 տարեկան երեխաների համար	2,538,900	42.00	106,633,800	78,000,000	15,600,000	93,600,000	30.72	36.87	79,900,000.00	15,980,000	95,880,000.00	31.47	37.76